ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 1392-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

--- ---------- 2025 թվականի N ---- Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի N 1392-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում անասնաբուծության խթանման ծրագրերը հաստատելու մասին» N 1392-Լ որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված «Մթերատվության բարձրացման փորձնական» ծրագրի?

1) 8-րդ կետից հանել (հոլշտին, ջերսեյ, սիմենթալ, շվից) բառերը?

2) Ամբողջ տեքստում Տավուշ բառը և դրա հոլովաձևերը փոխարինել Լոռի բառով և դրա համապատասխան հոլովաձևերով, իսկ 29480 թիվը՝ 21960 թվով, 16840 թիվը՝ 12640 թվով.

3) 11-րդ կետի 4-րդ ենթակետի ա? պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ ««ա? ունեն տվյալ ոլորտում համապատասխան գործունեությամբ զբաղվելու հավաստագիր ունեցող մասնագետներ (բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթությամբ),»?

4) 13-րդ կետի և Տավուշի մարզերը բառերը փոխարինել մարզը, Լոռու մարզը, որը հանդիսանում է հանրապետությունում առաջատար տոհմասելեկցիոն ավանդական տարածաշրջան բառերով.

5) 15-րդ կետի աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

Մարզերը	Կովերի թիվը՝ 01.01.2024 թ-ի դրությամբ, հազ. գլուխ	2025 թ.		2026 թ.		Ընդա	
		սերմնավորվող կովերի թիվը, գլուխ	ֆինանսավորման ծավալը, հազ. դրամ	սերմնավորվող կովերի թիվը, գլուխ	ֆինանսավորման ծավալը, հազ. դրամ	սերմնավորվող կովերի թիվը, գլուխ	Ֆ ծ
Արագածոտն	28484	1000	10000?0	2020	20200?0	3020	3
Գեղարքունիք	34217	3500	35000?0	2500	25000?0	6000	6
Շիրակ	31580	3220	32200?0	3220	32200?0	6440	6
Սյունիք	15716	1600	16000?0	1500	15000?0	3100	3
Լոռի	34649			3400	34000?0	3400	3
Ընդամենը	144646	9320	93200?0	12640	1 26400?0	21960	2

.

6) 22-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝

22? Նախարարությունը 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է ներկայացված փաստաթղթերը և ծրագրի 11-րդ կետի 4-րդ ենթակետով, 19-րդ և 20-րդ կետերով սահմանված դրույթներին համապատասխանության վերաբերյալ գրավոր տեղեկացնում մարզպետի աշխատակազմին:».

7) 23-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «23? Եթե պայմանագիրը կնքելուց հետո Կազմակերպությունը չի կատարել պայմանագրային պարտավորությունները, ապա պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո 5 օրվա ընթացքում լուծվում է ծառայություններ մատուցելու վերաբերյալ Կազմակերպության հետ կնքված պայմանագիրը և Կազմակերպությանը վճարված գումարից չկատարված պայմանագրային պարտավորություններին համապատասխան գումարը մեկամսյա ժամկետում ենթակա է վերադարձման պետական բյուջե:».

8) 24-րդ կետի 10 թիվը փոխարինել 45 թվով.

9) 26-րդ կետի պետք բառը փոխարինել կարող բառով.

10) 27-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «27? Տվյալ Համայնքում կամ Բնակավայրում կովերի արհեստական սերմնավորում իրականացրած Կազմակերպությունը յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Համայնքի կամ Բնակավայրի ղեկավարին է ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում իր կողմից կատարված սերմնավորման ծավալների վերաբերյալ հաշվետվություն, որում պետք է նշված լինի

տնտեսավարողի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, սերմնավորման ամսաթիվը, սերմնավորված կովի ականջապիտակի գույքային համարը, ցլի անունը և գույքային համարը: Հաշվետվությանը կցվում է ծառայությունների մատուցման երկկողմ պայմանագիրը (կազմակերպության և տնտեսավարողի միջև):».

11) 28-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ «28? Համայնքին կամ Բնակավայրին տրամադրված հաշվետվությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրվում է և ներկայացվում Մարզպետի աշխատակազմ, որն էլ այն 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Նախարարություն՝ ըստ համայնքների նշելով նախորդ ամսվա ընթացքում սերմնավորված կովերի թիվը, տնտեսավարողի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, սերմնավորման ամսաթիվը, սերմնավորված կովի ականջապիտակի գույքային համարը, ցլի անունը և գույքային համարը:».

12) 33-րդ կետի Պայմանագրում բառը փոխարինել Հաշվետվությունում բառով, 25 թիվը փոխարինել 35 թվով.

13) 35-րդ կետի 294 մլն 800 թիվը փոխարինել 219 մլն 600 թվով.

14) 36-րդ կետի 12640 թիվը փոխարինել 9320 թվով, իսկ 126400 թիվը փոխարինել 93200 թվով, 16840 թիվը փոխարինել 12640 թվով, իսկ 168400 թիվը փոխարինել 126400 թվով:

2? Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Ն.ՓԱՇԻՆՅԱՆ